

## **Արագածոտնի մարզպետը քաղաքացիների ընդունելություն կատարեց Ապարանում**

Քաղաքացիների ընդունելությունների կազմակերպման կարգի համաձայն Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի մոտ ընդունելության օր է յուրաքանչյուր ուրբաթ, որին քաղաքացիները մասնակցում են ինչպես նախապես գրանցվելով, այլնպես էլ հանպատրաստից: Բացի այդ, յուրաքանչյուր եռամսյակի երրորդ ամսում մարզպետը այցելում է տարածաշրջաններ եւ տեղում կազմակերպում քաղաքացիների ընդունելություն:

Դեկտեմբերի 4-ին Սարգիս Սահակյանն այցելեց Ապարան, եւ քաղաքապետարանում կայացավ ընդունելություն: Մասնակցեցին տարածաշրջանի տարբեր համայնքների բնակիչները՝ 38 մարդ, ովքեր իրենց հուզող հարցերով դիմեցին մարզպետին:

Դիմումատուներից 33-ը ունեին դրամական աջակցության կարիք եւ բոլորն էլ բավարարվեցին: Մարզպետը տեղում լուծում տվեց նաեւ բուժօգնության, բնակարանի վերանորոգման, սոցիալական բնույթի մի շարք հարցերի, կատարեց անհրաժեշտ պարզաբանումներ: Առանձնապես կարիքավոր մի շարք ընտանիքների նվիրվեցին ձմեռային անհրաժեշտ կոշիկեղեն եւ հագուստներ:

Մարզպետը վաղօրոք այցելել էր նաեւ Արագածի տարածաշրջան, որտեղ ընդունելության էր եկել 40 բնակիչ: Դեկտեմբերի 11-ին քաղաքացիների ընդունելությունը կկայանա Թալինի քաղաքապետարանում, որին կմասնակցեն Թալինի տարածաշրջանի համայնքների բնակիչները: